№ 130 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6 **1897** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6 № 130

ՔԱՄԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարուան 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է ֆ օ ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւն բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և ամն օրերից)

Յայտարարութիւն ընդունւում է ամեն ևզրւով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է լ է ֆ օ ն № 253.

ՇԱԲԱԽՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 րուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը 2 ր., ամսականը՝ 1 րուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ»՝ կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸՆ: Յատարարադրութիւնները պէտք է գիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ, Редакція «МШАКЪ»: Իսկ արտասահմանից Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անգլիացիները և գերմանացիները թիւրքիայում. Իրաւազուրկ տարր քաղաքներում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երեմիա արքեպիսկոպոս Գալատեան. Լիակատիչի դասախօսութիւնները. Մասնադրութիւն. Օպերային ներկայացումները. Նամակ Ախալքալաքից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Մէկնքի աղջիկը:

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՑՈՒՄ

—

Ջը նայելով գերմանացիների ձգտմանը՝ ձեռք առնել Թիւրքիայի արդիւնաբերական բոլոր ձեռնարկութիւնները, ջը նայելով թիւրք լրագիրների հայհոյական յօդուածներին, որ նրանք ամեն օր գրում են Մեծ-Բրիտանիայի դէմ, անգլիացի կապիտալիստները չեն դադարում հօկայական նախագծեր ներկայացնել Թիւրք կառավարութեան և կօնցեսիաներ խնդրել նրանից, առաջարկելով երկաթուղու գծեր անցկացնել Թիւրքաց պետութեան զանազան մասերում: Օրինակ այժմ, Թիւրքաց հասարակական աշխատանքների մինիստրութեան մէջ գտնւում է երկու առաջարկութիւն՝ մէկը եգիպտա-ասիրիական երկաթուղին կառուցանելու համար, իսկ միւսը՝ երկաթուղիա կան ցանցով ծածկել ամբողջ փոքր-Ասիան, Թիւրքաց Հայաստանի զլխաւոր կէտերն ները և եւրոպական Թիւրքիան:

Անգլիացիները օսմանեան կառավարութեան ուշադրութիւնն են գարձնում այն հանգամանքի վրա, թէ այդ երկաթուղինները կարող են Թիւրքաց պետութեան հարստութեան աղբիւր գառնալ և մանաւորապէս կը բարձրացրեն Միջագետքի քարածուխի արժէքը և կը գիւրացնեն նրա արտահանութիւնը դէպի օտար երկիրներ: Սակայն եթէ հաւատանք ֆրանսիական լրագիրներին, երբէք Թիւրքաց սուլթանը չի տայ այդ կօնցեսիան անգլիացիներին, մինչև անգամ եթէ նրանք կամենան Թիւրքերի անունով վերցնել այդ իրաւունքը, որովհետև այդ դէպքում երկաթուղին ամբողջապէս կը գանվի անգլիացիների ձեռքը: Կօնցեսիան, ասում է „Sémaphore“ լրագիրը, կտրւում է „բանեան անունով մի անգլիացի, հնդկական զօրքի նախկին կապիտանը, որը Աշմէդ Բարալեան բանակում, այն Աշմէդ Բարալեան, որին Անգլիայում հեղնօրէն անուանում են „Կղզիի պատգամաւոր“ և որը օսմանեան կառավարութեան պաշտպանութեան համար տասօդ յօդուածներ էր գրում հայերի և յոյների դէմ: Ջը նայելով Աշմէդ Բարալեան բարեկամ Բանանի անսահման Թիւրքասիրութեան, Թիւրքաց կառավարութիւնը կատարելապէս դէմ է այդ կօնցեսիան տալու“:

Պէտք է նկատել որ օսմանեան կառավարութեան այդ զիմադրութեան այժ առողը Բերլինի կառավարութիւնն է, որը շատ տարիներից ի վեր գերմանական կօլօնիաները հիմնելով Փոքր-Ասիայի մի քանի հայաբնակ կէտերում, վճռապէս որոշել է գերմանական կապիտալները մտցնել սուլթանների երկիրը՝ առևտուրը և արդիւնաբերութիւնը իր ձեռքում պահելու համար: Վերջին յոյն-Թիւրքական պատերազմի ժամանակ Վիլհելմ կայսրի կատարած գերը՝ ասելի էլ այժ առաց գերմանական խաղաղ նուաճման քաղաքականութեան, և կօնգօնում ահագին ջանքեր պէտք է գործ գնեն, որպէս զի անգլիական քաղաքական ազդեցութիւնը կ. Պօլսում Թուլանալուց յետոյ՝ գէթ անգլիական կապիտալի և առևտրի այժը չը Թուլանայ: Ոչ կը յաղթի այդ մրցման մէջ՝ գերմանիան Թէ Անգլիան—այդ ապագան կը պարզի: Բայց Թէ մէկ և Թէ միւս դէպքում Թիւրքիան կը Ճնայ նոյն ողորմելին, երբէք ընդունակ չը լինելով սեփական այժերով մշակելու իր երկիրը և այդ երկրի ահագին հարստութիւնը, որ այժմ Թաղված է ոչ Թէ հողի, այլ արեան տակ:

ԻՐԱՒԱԶՈՒՐԿ ՏԱՐՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

—

Ամերիկեան „North American Review“ ամսագրի սեպտեմբերի համարում գօկտօր Սարօնգ գեաղել է մի յօդուած, որ վերաբերում է մի կարևոր խնդրի, այն է ապագաղնահարկութեան գիւղերից գէպի քաղաքները տեղափոխելու խնդրին: Սարօնգ այն եզրակացութիւնն է գալիս բերում, որ ոչ միայն Ամերիկայում և եւրոպայում, այլ նաև Ասիայում և Աֆրիկայում գիւղերի ժողովուրդը համեմատաբար պակասում է, իսկ քաղաքներինը օրէցօր աւելանում: Ինչպէս յայտնի է, նոյն երևոյթը տեղի ունի և Անգլիայում, ուր մենք պարզ կերպով նկատում ենք մեր քաղաքների արագ մեծանալը, ուր գիւաբերութիւն ունի ժողովրդի մի մեծ հոսանք գիւղերից գէպի քաղաք: Դա, ինչպէս ուրիշ տեղերում, այնպէս և մեր հայրենիքում, կազմում է օրվայ չափը, մեր ասոյիալական կեանքի ամենահոչակաւոր կողմերից մէկը:

Երևոյթը ունի հիմնական պատճառներ և արժանի է խորին ուշադրութեան: Սահման. Կա—քո թէը: Ասանց քեզ ես ոչինչ եմ, բայց քեզ հետ—քո ընկերը կը լինեմ:

Երիտասարդը միանգամից խօսք չը գտաւ պատասխանելու: Քիչ միջոց մտածեց և ապա խօսեց, անպատասխան թողնելով Գայիանէի ասածների այն մասը, որ իրան էր վերաբերում:

—Տարօրինակ գանկութիւն, ասաց նա.—ես չեմ տեսել որ մէկը թողնէ հանգիստ ու ապահով անկիւնը և ինքնակամ գնայ վտանգների մէջ:

—Ես ասելն կասեմ. վտանգների տեղից ամենքն են ուզում փախչել, բայց ոմն է պզտլում այդ բանը: Միայն նրանց, որոնք առանց այդ էլ ունեն ապահովութիւն, թափուրիլու տեղ: Մի երևոյթ մեր գիւղում ամենայ ընկաւ. տարան Տէր-Մարտիրին և փակցրին նրա աղջկան: Կայ չկայ այդ ժամանակ մտածեց և նրան այնպէս թաց թէ վանքի պատերի մի քանի քարերը խախտած են երևում. վերցրեց իր երկու կոպերին, բերեց մեր տունն, փակեց այստեղ մի մամի մէնակում: Բայց ամիսներ առաջ մի աղջիկ, անհայր և անմայր մի խեղճ, տանջված, անպատսպ, վազել էր գէպի վանքը, որ այնտեղ հանգստացնէր իր պատռտվող սիրտը, և ինչ... նոյն կայ Հեղինէն զարհուրելի չարագործութեան համար: Ինչու՞ և այսպէս: Ինչու՞ վանքի կոյսերը Տէր-Մարտիրի աղջկանից լաւ են: Ցեսել ես երբ և իցէ որ արեգակը կամ լուսինը ուրիշ գոյնի չաղերով լուսաւորէ նրանց, որոնք լաւ են համարվում. տեսել ես որ աղբիւրը խեղճի համար ուրիշ տեսակ ջուր բերէ, իսկ բախտաւորի համար ուրիշ տեսակ... Ա՛հ, դու չը գիտես թէ ինչեր են լսում իմ տակնուվրայ եղած ժամանակներում: Թող, ասում են, աշխարհը քանդվի, միայն թէ Գայիանէին ոչ ոք ձեռք չը տայ, որովհետև նա Մելիք-Յովսէփի աղջիկն է: Անցնում օրերը մարդիկ եկան, խնդրում, աղաչում էին գարի կամ կորեկ տալ սովածների համար... Գիտես ինչ սովածներ են դրանք. վաղը գնա գիւղամէջ, կը տեսնես նրանց ցանկապատների տակ, մերկ գիակներ և ոչ թէ մարդիկ... Եւ չը տալիս՝ գարձեալ իմ պատճառով. Թիւրքերը կարող են խանգել, վրէժ կը հանեն մեզանից, կը վնասեն ինձ: Բայց եթէ տեսնես ինչպէս ամեն ամիս մեր հօրերից ցորեն ու գարի են տալիս Թիւրք գինուորների համար, որոնք այս օրերն են հասցրել մեզ... Միշտ առատ են նրանց համար, միշտ մի քանի չափ էլ աւել են տալիս... Օ՛, ապահէր ինձ այս անարգարութիւնից...

Նրա ձայնը ընդհատվեց, աչքերի մէջ պղպջաց արտասուքը: Ջալալը գարձեալ յարձակվեց, ուզում էր բռնել նրան, պահել, սիրտ տալ: Բայց կանգ առաւ և աստիճ յուզված՝ ասաց.

—Բայց ես ինչ անեմ, Գայիանէ, ասա, մի ասիջիր. Թող հաւատամ որ քեզ կենդանի եմ, քո աչքերի մէջ արտասուք չի երևայ... Ամենից արդար ու հեշտ միջոցն այն է, որ ես վերցնեմ քեզ ու տանեմ: Բայց չես ուզում...

—Իսկ այս երկիրը...

Ջալալը հեգնօրէն ծիծաղեց, հասկացնելով որ ինքը բոլորովին չի հասկանում, Թէ այդ ինչ արկածութիւն է:

—Թողնել արիւն-արտասուքը ու գնալ... Լսել ես, ասում են այստեղ լոյս է ընկել մի այլ գաղան, որ գողանում է մեր աղջիկներին ու հարսներին և տանում է հեռու, հեռու... Սառամբուլ, ուր և ծախում է... Ո՛չ, քարերը, Թմբերը, ձորերը կը կանչեն իմ եսիից, կանիծեն ինձ, եթէ ես գնամ...

—Բայց երևում է որ դու չատ ես անփորձ, Գայիանէ, պատասխանեց Ջալալը մի փոքր առնն, Թեթև խրատական եղանակով:—Դու կարծում ես Թէ գրսի բաներն էլ այնպէս լաւ գիտես, ինչ-

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՎՈՒՄՆԱՐ

ԴՎՎՃՎՍՈՑ ԴՎԺՎՉՂ

Ազգային ժողովրդական երգերի հավաքումը մեծ նշանակություն ունի ինչպես ազգագրության, այնպես էլ երաժշտության համար։ Ազգագրությունը ուսումնասիրում է ժողովրդի կյանքը, նրա սովորությունները, հավատալիքները, ապրելակերպը, իսկ երաժշտությունը՝ ժողովրդի հոգեկան կյանքը, նրա զգացմունքները, ձգտումները, ինչպես նաև նրա ստեղծագործական ընդունակությունները։ Ժողովրդական երգերի մեջ ամենից ավելի արտահայտվում է ժողովրդի հոգեկան կյանքը, նրա ցավերը, տառապանքները, ուրախություն

ՕՄԱՆՑՈՒՆԵՐԻ ՂԱԶԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Ս. Յովհաննէսեան

Դժբախտ 3-ին Ալբատրոսէ մեծաքանակ ժողովուրդ վազեց «Յուսիսային» օտարերկրեայ նաւահանգիստ—Փասօրտ ձգելու համար III հիւսիսային փողոցի 8 տուն թիւով իւրեանց բնակարանները։ Ամէն մարդ կ՚ուզէր նաւահանգստէն հեռանալ մինչեւ որ ան ալ իր հերթին նաւակ մը գտնէ։

Ամէնքն ալ կը խօսէին ոճրագործ Ճէյքի մասին։ Ամէնքն ալ կը պատմէին թէ ինչպէս ան ամբողջ գիշեր ոճիրներ գործած է Ալբատրոսի մէջ։ Ամէնքն ալ կը կրկն

հայ մի պզտիկ սենեակի մէջ տաղտկամածի վրա, առանց անկողնոյ և ծածկոցի։ Իսկ ինչ կընեն Նիւ-Եօրքի հարուստ հայ վաճառականներ և գործատէր հայեր իրենց արհեստակից և հայրենակից թշուառներուն համար։—Ոչինչ։

Ախտօք գժուռը է Նիւ-Եօրքի համար, ուր կան 50-էն աւելի մեծ և պզտիկ վաճառականներ և 500-էն աւելի գործ ունեցող գործատէրներ, հասատեղ մի գործատէրական բիւրօ և վարձել մի կամ երկու բնակարան, ուր կարող լինէին այդ խեղճերը պատսպարիլ։ Ամերիկայի հասարակական բարի պատգամդրութիւնք մեզի հետ ունի, և մի հայկական գործատէրական բիւրօյի հաստատութիւնը Նիւ-Եօրքում հարիւրաւորներուն գործ կրնայ գտնել և այդպիսով թեթևացնել նորեկ գաղթական հայերի վիճակը։ Վահէ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Բ. Դուռը մի չրջաբերական ուղարկեց պետութիւններուն, որի մէջ յանդգնաւած է, թէ Յունաստանից զէնքերը են ուղարկւում Կրետէ։ Փնտռելիւն կատարելուց յետոյ երևայ, որ յիրաւի վերջերս զէնք մտցնելու փորձեր են եղել կղզում, բայց... կրետացի մահմետականների կողմից։ Ահասարակ, «Standard» լրագրի Կ Պօլսի թղթակցի արդարացի նկատողութեան հետևանաւ, սակայն լաւ համոզված է, որ կրետացիները հարցը եւրօպական դիպլօմատիայի թոյլ կէտերից մէկն է, և այդ պատճառով յայտարերով ամրակածում է պետութիւնները այդ հարցի համար։ Եւ թէպէտ այդ յայտարերը մինչև այժմ պետութիւնները անպատասխան են թողել, բայց այդ լռութիւնը Բ. Դուռը պետութիւնների մէջ եղած տարաձայնութեամբ է բացատրում։

—«Կրետացիներին, անկասկած, ատում է «Pol. Correspond.» լրագիրը, ղղուեցրեց այդ երկար, անպատուղ կռիւը և նրանք ամեն կերպ աչխատում են վերականգնել կեանքի բնական պայմանները կղզում։ Եւ որովհետև նրանք համոզվեցին, որ իրանց միջոցներով չեն կարող վերականգնել կարգը կղզում, այդ պատճառով համաձայնութիւն են կամենում կայացնել պետութիւնների հետ։ Ապատամբների պարպչութիւնը կղզու զանազան չրջաններում ժողովներ են կայացնում, ուր կը վճռվի ընդունել պետութիւնների առաջարկած ինքնավարութիւնը։ Ի հարկէ, դրա համար չատ ժամանակ կը պահանջվի, որովհետև կղզու երկար տարածութիւնը և վատ ճանապարհները դժուարացնում են պարպչութիւններին հեչտութեամբ յայտնութիւններ հաստատել իրար մէջ։

—Սօֆիայից հեռագրում են Ֆրանսիական լրագիրներին, որ բօլգարական կառավարութիւնը, ի նկատի ունենալով լրագիրների խիստ յարձակումները իր դէմ, մտադիր է սահմանափակել մամուլի ազատութիւնը։

ԹԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ

Յայտնի պրօֆէսօր Վիրխով հոկտեմբերի 25-ին ուներ իր մանկավարժական գործունէութեան յիսնամեայ յօբելեանը։ Բերլինի համալսարանի և ուսանողութեան ներկայացուցիչները չնորհաւորութիւններ մատուցին հոչակաւոր գիտնականին։ Ուրիչ հանդէսներ, որ մտադրութիւն կար կատարել յետաձգվեցին, որովհետև յօբելեանը այս օրերս դառնաւոր մահուան ժամանակ հիւանդացաւ։

Աթենք, 4 նոյեմբերի։ Պատգամաւորների ժողովը լի է։ Քաէարկութիւնից առաջ Դելիանիս յայտարարեց, որ չէ ցանկանում նախագահի ընտրութեան քաղաքական նշանակութիւն տալ։ Դելիանիսների թեկնածու Բոմա, 155 ձայնից 83 ձայն ստացաւ։ Կոնտոստօվալօս, միւս բոլոր Ֆրագկիսների թեկնածուն, ստացաւ 64 ձայն։ Ընտրված է Բոմա։

ԲՕՄԲԱՅ, 5 նոյեմբերի։ Երէկ Պունի հիւանդանոցում ընդունվեցին ժանտախտով հիւանդացած 4 եւրօպացիներ ևս։ Վերջին 48 ժամվայ ընթացքում եղաւ 134 հիւանդութեան դէպք. 94 մեռան։ Հիւանդանոցում կան 630 հիւանդներ։ Պունի քաղաքը կատարեալ դատարկվեց։

Կ. ՊՕԼԻՍ, 5 նոյեմբերի։ Այն դէպքում, եթէ աւստրիական դեսպանութիւնը, նշանակած ժամանակամիջոցում, բաւարարութիւն չի տրվի, դեսպանութիւնը պատրաստում է ոչ միայն մնկնելու, այլ և գործադրելու ուրիչ սահպողական միջոցներ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Նոյեմբերի 4-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ ստէռ.	93	կ. 50 կ.
Բերլինի վրա 100 մարկ —	45	» 75 »
Պարիզի վրա 100 ֆրանկ —	37	»17½»
Ոսկի — — —	—	» — »
Մաքսային կուպօններ —	149	» — »
Բօրսային դիսկօնտ —	5	»6½0/0»
4% պետական բէնտա. . . .	99⅛»	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	292	» — »
— — երկրորդ —	252¼»	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի.	207	» — »
5% պետական երկաթուղ. բէնտա.	—	» — »
4% Ներքին փոխառութեան . .	98⅜»	— »
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100½»	— »
Ազն. կալ. պետ. բանկի խաղարկ.	—	» — »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի	100⅞»	— »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի	—	» — »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մոսկ.	—	» — »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաներ .	101⅛	— »
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101	» — »
Օդէսայի — — —	100	» — »
Թիֆլիսի — — —	99	» — »
Թիֆլիսի կալ. բանկի 6%—	100½»	— »
5% — — —	99¼»	— »
Վոլիայական 6% — —	100½»	— »
5% — — —	99¼»	— »

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ԵՐԵՒԱՆ Ա—Դօ. Ձեր թղթակցութիւնները ամբողջութեամբ լոյս չը տեսան միևնոյնից անկախ պատճառներով։

ԹԻՖԼԻՍ. Պերճ Պօչկանց. Ձեր անունով նամակ է ստացված խմբագրատան, բարեհաճեցէք ստանալ։

ԲԱԳՈՒ. Ա. Ամայեանց. Ձեր գրքի մասին սըպագրված քննադատութեան դէմ ձեր պատասխանը չի տպագրվի. կարիք էլ չը կայ քննադատութեան դէմ պատասխան գրելու։

ԹԻՖԼԻՍ. (?). Ս. Քամալեանց. Մի նամակ է ստացված խմբագրատանը ձեր անունով։ Խընդրում ենք ստանալ։

ԵԳԻՊՏՈՍ. ***. Սպասում ենք ձեր թղթակցութիւններին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ մէկի վերջին դասարանի օգնութեան կարօտ մի աչակերտ խնդրում է տպագրել հետևեալը։—Ես գտնվում եմ չատ նեղ վիճակի մէջ. ունեմ 25 րուբլի պարտք, որը հարկաւոր է անյապաղ վճարել. հակառակ դէպքում անկարող եմ վերջացնել դպրոցական դասընթացը։ Օգնութեան ուրիչ աղբիւր չունենալով՝ գիմում եմ հասարակութեան կարող և բարեսէր անձանց՝ խնդրելով որ նրանցից մէկը բարի գտնվի լինձ պատռել այդ դժուարութիւնից. գոյատևցից զատ՝ մի երկու ամիս յետոյ կը վերադարձնեմ լինձ տրված այդ գումարը։ (№ 130) 1—3

Ամսիս 8-ին, չաբաթ օրը, ժամի 12-ին, լինելու է ԱՃՈՒՊ (առանց կրկնաճրպի) կապալով տալու չորս տարի ժամանակով յունվարի 1-ից 1898 տարի, դպրոցապատական կալուածքը Ախտակ փերոյեանցից ընծայած, որը գտնվում է Սէյդաբադի փողոցում № № 6 և 11։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան գիւանատան մէջ, ամեն օր, բացի կիրակից և տօներից, առաւօտեան 10—12 ժամը։
(№ 130) 1—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

Հոգաբարձական խորհրդարանում նոյեմբեր ամսի 12-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է ԱՃՈՒՊ (առանց կրկնաճրպի) կապալով տալու չորս տարի ժամանակով յունվարի 1-ից 1898 տարի, դպրոցապատական կալուածքը Ախտակ փերոյեանցից ընծայած, որը գտնվում է Սէյդաբադի փողոցում № № 6 և 11։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան գիւանատան մէջ, ամեն օր, բացի կիրակից և տօներից, առաւօտեան 10—12 ժամը։
(№ 130) 1—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

Հոգաբարձական խորհրդարանում նոյեմբեր ամսի 12-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է ԱՃՈՒՊ (առանց կրկնաճրպի) կապալով տալու չորս տարի ժամանակով յունվարի 1-ից 1898 տարի, դպրոցապատական կալուածքը Ա) 24 սենեակից, որ այժմս «Օգնա» հիւրանոցն է և բ) երեք խանութից։ Այդ կալուածքը գտնվում է քաղաքի 3-րդ մասում, Սօլդատսկի բազարում։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան գիւանատանը, ամեն օր, բացի տօներից, առաւօտեան 10—12 ժամը։
(№ 130) 1—3

ԱԼԻՒՐԱՂԱՑՆԵՐ

ԳՈՂՈՐՇՈՒ ՋՐԻ և ՁԻԱՔԱՐՇ

Պատրաստում է, ինչպէս մեծանագիտութիւն, ԻՆԺԻՆԵՐՆԵՐ

ԵՄՐԱԼՕՎԻ ԵՒ ԱԼԻԽԱՆՕՎԻ

Գործարանը, Թիֆլիսում, Ալէքսանդրեան փողոց, սեփական տունն։

(№ 102) 23—0

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքչաբթի օրերը, երկու չաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքչաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքչաբթի, 12/24 նոյեմբերի ԱՆԱՏՕԼԻ չոգենաւը, հատուկ ԲԻՒՆԿԻ։ Եւ այդպէս չաբաթական, երկու չաբաթը մի անգամ, չորեքչաբթի օրերը, ժամի 4-ին ճաչից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան առմամբներ տրվում են սովորականից պակաս գնով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների ստանալու համար թող բարեհաճին դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Ադհօյին, Նաբերէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկ-Նազարեանին, Սիոնի փող. Նահկին Ագբուռնու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կոլիբանովսկայա հրապարակ։ ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերչենրօդերին։ (№ 76) 8—20

ԼՈՑՍ Է ՏԵՍԵԼ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Փառակազմ եւ պատկերազարդ

ՕՐԱՑՈՑՑ 1898 Թ.

Վեհափառ Կաթողիկոսի, ս. Էջմիածնի, Գէորգեան ճեմարանի և այլ պատկերներով զարդարված. այլ և աւելի հարուստ եկեղեցական և վիճակագրական տեղեկութիւններով։ Վաճառվում է վիճակային կօնսիստօրիաներում և հոգևոր կառավարութիւններում. Թիֆլիսում՝ կնոտրօնական, իսկ Բաքվում «Բաքինի» գրավաճառանոցներում։ Մեծ քանակութեամբ գնողին 20% զիջումն կը լինի։ Պէտք է դիմել ս. Էջմիածնի ապարանական ժողովին այս հասցէով՝ Эчміадзинъ. типографическому комитету. (№ 114) 7—10

ԵՂԲ. ՍՏԵՓԱՆԵԱՆՑՆԵՐԻ

1880 թվից Բաքու քաղաքում գոյութիւն ունեցող «ՔԱՂՑՐԱԻԵՆԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ», որ գտնվում էր Օղլինսկայա փողոց, Բ. Լալայեանցի տ., և որ անցեալ 1896 թ. ապրիլ ամսում պատահար տրտնջից այրվեց,

ԱՅԺՄ ՆՈՐԻՑ ԲԱՑՎԵԼ Է հոկտեմբեր ամսից նոյն Օղլինսկայա փողոցի վրա, ՇԱԳԻԴԱՆԵԱՆՑԻ պատշաճում, №№ 2 և 3, հետևեալ ֆիրմայով.

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ ՔԱՂՑՐԱԻԵՆԻՆԵՐԻ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԳԷՈՐԳԵԱՆՑԻ

(CONFISERIE CENTRALE)

Գործարանը ընդունում է ամեն տեսակ քաղցրաւենիների պատուէրներ և կատարում է բոլորը թարմ նիւթերից և առանձին բարեխղճութեամբ։ Բացի դրանից, խանութում ամեն օր կարելի է ստանալ պատրաստի զանազան թարմ քաղցրաւենիք և խմորեղէն։ Խանութին ունի առանձին կահաւորած սենեակ, որտեղ կարելի է ստանալ թէյ, սուրճ, չոկօլատ, կակաւ և զանազան զովացուցիչ խմիչքներ։ (№ 122) 4—6

ՆԵՐԿԱՑ 1897 ԹԻՒՆ

Թիֆլիսի հայոց «ՀԱՅԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ» լոյս է ընծայել հետևեալ գրքերը

		Ր.	Կ.
ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ		»	40
ԳՈՒԼԼԻՎԷՐԸ ԹԶՈՒԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ	չքեղ պատկերներով՝ մանկական	»	40
ԳՈՒԼԼԻՎԷՐԸ ՀՍԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ	ընթերցութեան համար	»	40
ՆԱՊԱՍՏԱԿԻ և ՈԶՆՈՒ ԴՐԱՉԸ		»	40
ԴԱՒԻԹ ԿՕՊՊԵՐՖԻԼԴ, Չ. Դիքինսի		1	—
ԴԱՍԸՆԿԵՐՆԵՐ, Աննենսկայա		»	50
ԽԺՌՈՂՆԵՐ, պրօֆէսօր Բօդդանովի.		»	50
ԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ, Ալֆօնս Դօդէի.		»	40
ՀՌՕ ԿԻՆԸ, Ա. Ասարտեանի		»	40
ՈՍԿԻ ՇԻՆՈՂՆԵՐ, Յ. Օկկէլի		»	50
ԳՈՒԼԼԻՎԷՐԻ ՁԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ, Թարգ. Ալպիանի		»	50
ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՏԵՂԱՓՈՒԹԻՒՆԸ		»	5
ՎԵՆԵՏԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ, Շէքսպիրի, Թարգ. Մասեհեանի		»	40
ԵՐԿՐԱՇԱՐԺ և ՀՐԱՇԱԼՈՒՅՆ ԼԵՌՆԵՐ, Լամենեվիչի.		»	15
ԲՈՒԴԴԱ և ԻՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ, Սա. Մ.		»	20
ԵՐԿՐԻ և ԵՐԿՆՔԻ ՄԱՍԻՆ		»	10

Գնել ցանկացողները կարող են դիմել ընկերութեան գրասենեակը, ТИФЛИСЪ, Баронская ул. № 12. կամ՝ կնոտրօնական գրավաճառանոցը։ Ընկերութեան անդամները ստանում են ձրի հինգ րուբլու գրքեր։ (№ 121) 3—6

ՐԱՖՖԻ

«ՍԱՄՈՒԻԼ» ա. բ. և գ. գիրք։

«ԴԱԻԻԹ-ԲԵԿ» ա. բ. և գ. գիրք վերջապէս, և

«ԿԱՅԾԵՐԻ» երկրորդ լիակատար հատորի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է մինչև «ՍԱՄՈՒԻԼԻ» լոյս տեսնելը։ Ամեն մի գրքի գինն է 2 ր. 50 կօպէկ.

երեքի գինը միասին 6 ՐՈՒԲԼԻ։

«ՍԱՄՈՒԻԼ Ը» մամուլի տակն է և լոյս կը տեսնի յունվար ամսին։ Մամուլի տակն է և չատով լոյս կը տեսնի «ՈՍԿԻ Ս. ՔԱՂԱՂԱՑԻ», գինը՝ 70 կ.

Յանձնացողները կարող են դիմել թէ բաժանորդագրութեան և թէ բաքինի վաճառելի երկերի համար՝ Редакція ТИФЛИСЪ, Аршаку Раффи. Адресовать: M-me Rafli. 20, Uxbridge Road, Shepherd's Bush, LONDON W. (№ 127) 3—15

Дозволено цензурою, Тифлисъ, 5 Ноября 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.